«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի կողմից
« 29 » 08 2022թ.
Արձանագրություն № 1

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն _____ Ի.Վարդանյան
« 31 » 08 2022թ.

ԿԱՐԳ
«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ԵՐԵՎԱՆ 2021

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ղեկավարվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի խնդրի 1-ին և 2-րդ գործողության իրականացման հանձնառությամբ՝ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) միջին մասնագիտական մասնագիտությունների կրթական ծրագրերի մասնագիտական մի շարք դասընթացներում ընդգրկվում է հետազոտական աշխատանք:

1.2. Հետազոտական աշխատանքները ներմուծվում է տվյալ դասընթացի շրջանակում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը:

1.3. Հետազոտական աշխատանքը իրականացվում է ինչպես դասընթացի տեսական կամ գործնական պարապմունքների ընթացքում, այնպես էլ ինքնուրույն աշատանքների միջոցով, որի համար դասավանդող դասախոսը տամադրում է խորհրդատվություն:

1.4. Սույն կարգը սահմանում է բոլոր տեսակի (կուրսային, դիպլոմային, ռեֆերատ, ավարտական աշխատանք) հետազոտական աշխատանքների կազմակերպման և անցկացման նպատակները, խնդիրները, ամփոփման և գնահատման կարգը:

1.5. Հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացների ցանկը սահմանում է մասնագիտական ամբիոնի վարիչը և հաստատվում է Մանկավարժական խորհրդի կողմից: Հաստատումից հետո նշանակվում է՝ ղկավար, ժամանակացույց և ներկայացման վերջնաժմկետ:

1.6. Սույն կարգը կարող է վերանայվել, կամ փոփոխվել քոլեջի Տնօրինական խորհրդի կողմից, վավերացնում է Քոլեջի տնօրենը

2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Հետազոտական աշխատանքը ներառվում է միայն մասնագիտական դասընթացներում:

2.2. Հետազոտական աշխատանքը մասնագիտական ոլորտին առնչվող, կիրառական նշանակություն ունեցող և գործնական խնդիրների լուծմանը միտված ինքնուրույն անհատական կամ խմբային հետազոտություն է: Այն անմիջականորեն կարող է առնչվել ինչպես տվյալ մասնագիտական դասընթացի առարկային և խնդիրներին, այնպես էլ հարակից դասընթացներին:

2.3. Հետազոտական աշխատանքը կարող են կազմակերպել ուսանողի կամ ուսանողների խմբի (առավելագույնը 3 ուսանող) կողմից՝ դասընթացը վարող դասախոսի ընդհանուր ղեկավարությամբ:

2.4. Քոլեջում հետազոտական աշխատանքները կազմակերպում են կիրռելով գիտական, հետազոտական ժամանակակից մեթոդներ և միջոցներ: Աշխատանքի արդյունքում ստացված տվյալները վերլուծվում են, և արվում է համապատասխան եզրակացություն:

2.5. Հետազոտական աշխատանքը՝ (կուրսային, դիպլոմային և ավարտական, A4 ֆորմատի առնվազն 18 էջ) պետք է ունենա տիտղոսաթերթ (վերնագիր, հեղինակ կամ համահեղինակներ), ներառելով հետևյալ բաղադրիչները.

1) հետազոտության նպատակը,
2) հետազոտության խնդիրները,
3) հետազոտության մեթոդները,
4) դիտարկվող հիմնահարցերի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ ըստ դրված խնդիրների, գրականության հակիրճ վերլուծություն,
5) ստացված արդյունքների (տվյալների) ներկայացում և վերլուծություն,
6) եզրակացության ներկայացում,
7) գրականության ցանկ:

2.6. Ռեֆերատիվ աշխատանքները (A4 ֆորմատի առնվազն 3 էջ) պետք է ունենա վերնագիր, հեղինակ կամ համահեղինակներ, ներառելով հետևյալ բաղադրիչները.

1) աշխատանքի նպատակը,
2) դիտարկվող հիմնահարցերի վերաբերյալ գրականության հակիրճ վերլուծություն,
3) եզրակացության ներկայացում,
4) գրականության ցանկ:

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

3.1. Դասընթացի շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի (ռեֆերատ կամ կուրսային) արդյունքը հաշվի է առնվում ինչպես տվյալ դասընթացի, այնպես էլ հարակից դասընթացների ամփոփիչ գնահատականում որպես ընթացիկ միավոր՝ առավելագույնը 5 միավոր:

3.2. Մասնագիտական առանձին դասընթացներից կամ մոդուլներից կատարված հետազոտական աշխատանքը (դիպլոմային կամ ավարտական) ներկայացվում է համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ պետական ավարտական ամփոփիչ ատեստավորման ժամանակ պաշտպանության ձևով:

3.3. Կատարված աշխատանքի բաղադրիչի գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով և համամասնությամբ.

1) թեմայի արդիականության հիմնավորում և կատարման ինքնուրույնություն.
   - ռեֆերատ կամ կուրսային՝ առավելագույնը 2 միավոր,
   - դիպլոմային կամ ավարտական աշխատանք՝ առավելագույնը 4 միավոր,
2) աշխատանքի պահանջների ամբողջական կատարում.
   - ռեֆերատ կամ կուրսային՝ առավելագույնը 1 միավոր,
   - դիպլոմային կամ ավարտական աշխատանք՝ առավելագույնը 2 միավոր,
3) ստացված արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն.
   - ռեֆերատ կամ կուրսային՝ առավելագույնը 1 միավոր,
   - դիպլոմային կամ ավարտական աշխատանք՝ առավելագույնը 2 միավոր,
4) աշխատանքի բանավոր ներկայացում.

- ռեֆերատ կամ կուրսային առավելագույնը 1 միավոր (եթե աշխատանքը կատարվել և տրվել է դասախոսին, բայց բանավոր ներկայացում տեղի չի ունեցել, ուանողը կարող է ստանալ միայն մյուս չափանիշների գծով տրվող միավորը. ուսանողի ամփոփիչ գնահատականը ձևավորվում է մյուս չափանիշներով),
- դիպլոմային կամ ավարտական աշխատանք՝ առավելագույնը 2 միավոր:

5) աշխատանքում գրագողության հայտնաբերման դեպքում, համաձայն Քոլեջում գործող «Ակադեմիական ազնվության» կարգի, աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

4. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅԸ

4.1. Հետազոտական աշխատանք ներառող դասընթացները միջին մասնագիտական կրթական ծրագրում կարող են իրականացվել.
- ❖ ռեֆերատիվ աշխատանքները՝ առավելագույնը 4 շաբաթում,
- ❖ կուրսային աշխատանքներ՝ առավելագույնը մեկ ուսումնական կիսամյակ,
- ❖ դիպլոմային կամ ավարտական աշխատանք՝ առավելագույնը մեկ ուսումնական տարի (ավարտական):

4.2. Հետազոտական աշխատանքի թեմաները տրվում և հաստատվում են դասախոսի կողմից յուրաքանչյուր կիսամյակում՝ 4 շաբաթվա ընթացքում:

4.3. Խմբային հետազոտական աշխատանք կատարելու դեպքում, խմբերի կազմը հաստատվում է դասախոսի կողմից յուրաքանչյուր կիսամյակում՝ 6 շաբաթվա ընթացքում:

4.4. Հետազոտական աշխատանքը դասախոսին ներկայացվում է տպագիր տարբերակով՝ դասախոսի կողմից սահմանված ժամկետում: